Ծով aliz Բանուչյան

Ես գիտեմ՝ դու ինչ ես ապրում

Ես գիտեմ՝ դու ինչ ես ապրում,

ասես սիրտդ ձգանով քաշում են,

քո ամեն մի զգացած ու ապրում

ասես մեկն ինչ-որ տեղ հաշվում է…

Մե՛կ հանգիստ ես, մեկ էլ զայրույթը

նորից քեզ իր երախն է առնում

այդ ինչի՞ց է նրանց սրտանյութը,

որ տագնապն այս նրանց չի սպառնում . . .

Մեկ զոռում ես՝ վերջ ժամանակն է

որ լինենք ցավից ուժեղ,

ձեռքերիդ է թափվել իմ թանաքը,

հարկավոր է նախ ցավը բուժել . . .

Լա՛ց եղիր,

լա՛ց եղի՛ր

զոռա՛ . . .

և մահից կյանքով զատվիր

Լաց եղի՛ր,

լաց եղի՛ր

զոռա՛ . . .

Քեզ հյուծող ցավից ազատվի՛ր . . .

Իսկ հետո նոր

ուժեղ եղիր . . .

իսկ հետո նոր

եղի՛ր ուժեղ . . .

06.10.2023